

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈԶ ՀՈՂՔՈՂԿՈՄԱՅ
ՀԱՅԱՍՏԱԿԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Խ. Ա.ԴԱԶԱՆՑԱՆ

ԴԱՅԱՏՎԻՆ ՄԿՆԵՐ, ՍՈՒՍԼԻԿՆԵՐ ՁԵՎ
ՌԱՅՔԱՐ ՆՐԱՆՑ ԴԵՄ

632
Q-44

ԳՅՈՒՂՂՐԱՅ

1937

ՏԵՐԵՎԱՆ

04 AUG 2010

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈԶ ՀՈՂՔՈՂԿՈՍԱՏ
ՀԱՅԱՍՏԱԿԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

632

6-44
ՄՊ.

Խ. Ա.Դ.Ա.Զ.Ա.Ն.Ց.Ա.Ն.

ԴԱՅԱՅԻՆ ՄԿՆԵՐ, ՍՈՒԾԼԻԿՆԵՐ ՅԵՎ
ՊԱՅՔԱՐ ՆՐԱՆՑ ԴԵՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԿՅ Արմանք. ՀՀՊ
Զերովու սպառություն
Պոլեալ մաշ, սուսլիկ և
борьба с ними



Մեր սոցիալիստական դաշտերի հերոսները համառա-
րեն պայքար են մղում՝ մոտակա տարիներում տարեկան
7—8 միլիարդ գություն հացահատիկ ստանալու վերաբերյալ
ընկ. Ստալինի տված ցուցմունքի իրականացման ուղ-
ղությամբ։ Անհրաժեշտ է, վոր մեր բոլոր կոլտնտեսա-
կաններն ու խորհանտեսությունների բանվորներն ազրո-
կանոնների ճշգրիտ կիրառման հետ միասին լուրջ ուսում-
նասիրության յենթարկեն գյուղատնտեսության ամենա-
կարեոր վասատուներից՝ մկների ու սուսլիկների տնտե-
սական նշանակությունը, կենցաղի առանձնահատկություն-
ները, նրանց գեմ պայքարի միջոցներն ու կազմակերպված,
գիտակցական պայքարի անցնեն նրանց գեմ, վորի
նպատակով ել գրված ե գրքույյս։

Այս աշխատությունը կազմելիս ոգտվել եմ ոռուսա-
կան գրականության նույն հարցին նվիրված՝ գլխավորա-
պես հետեւյալ հեղինակների աշխատությունից պրաֆ. Խ. Դ.
Արխիպրանցի, Ռբուենսկու և Վինոգրադովի, Պ. Ա. Սվիրդեն-
կոյի, Ի. Ի. Տրաուտի, Յա. Կուգնեցովի խմբագրությամբ
լույս ընծայված հողվածների ժողովածվից, ինչպես նաև
ԽՍՀՄ-ի և ՀՍԽՀ-ի Հողժողկոմատի պաշտոնական հրա-
հանդներից։

ԴԱՇԱՅԻՆ ՄԿՆԵՐ (ՄԿԱՆՄԱՆ ԿՐԾՈՂՆԵՐ)


Մկանման կրծողները կամ, ինչպես սովորաբար անվանում են՝ «գաշտային մկներ»-ը կամ ուղղակի «մկներ»-ը տարածված են ամենուրեք։ Մրանք ուղեկցում են մարդուն, և յերկրագնդի վրա չկա մի տեղ, վորտեղ ապրեն մարդիկ և չլինեն մկներ։ Մկները յուրաքանչյուր տարի ազգաբնակությանը հասցնում են հակայական չափի վնասներ, վնասելով, յերբեմն անգամ ուղղակի վոչնչացնելով հացահատիկային, բանջարանոցային ցանքերը, տնկարանները, պահեստները, գեղեցրը և այլն։

Մկների կողմից հասցված այսպիսի խոշոր վնասների պատճառը հիմնականում հանդիսանում է նրանց արագ բազմացումը. յերբեմն սրանք կարծ ժամանակամիջոցում այնքան արագ են բազմանում, և յեթե սրանց դեմ ժամանակին միջոցներ ձեռք չառնվեն, կարող են գյուղացիությանը զրկել բերքեց։ Ավելի պարզ կլինի, յեթե հիշենք, վոր յուրաքանչյուր եղ մուկ $2\frac{1}{2}$ ամիսը (իսկ յերբեմն 45—50 որ) լրանալուց հետո ծնում ե 4—12 մկնիկ և մեկ տարվա ընթացքում ունենում ե մինչև իննը ծին։ Որինակ՝ յեթե տարվա սկզբին մկների խտությունը մեկ եկտարի վրա հասնում ե 10-ի, ապա տարեվերջին, յեթե բազմացման համար ստեղծվեն նպաստավոր պայմաններ, նրանց ընդհանուր քանակը կհասնի 19890-ի, իսկ մեկ եգի սերունդը մեկ տարվա ընթացքում կհասնի 1989-ի։ Սա շատ հետաքրքիր ե համեմատելու համար մյուս կենդանիների հետ, որինակ՝ կովը, ձին ունենում են մեկ, սուսլիկները՝ 8, կատուն՝ 15, խողը՝ 20 սերունդ (տես դիագրամը):

Բարեբախտաբար բնության մեջ մկների բազմացման վրա բացասական ազդեցություն են ունենում մթնոլորտային տեղումները, հատկապես անձրևները, կերի պակասությունը, մկների բակտերիալ և պարագիտար հիվանդությունները, գիշատիչ թռչունների և գաղանների կողմից նրանց վոչչացումը և, վերջապես մարդկանց պայքարը նրանց դեմ՝ Մկերը անվում են հացահատիկով, կրծելով կանաչցողունը (գարնանը) և հատկապես հատիկը: Յուրաքանչյուր մուկ մեկ տարվա ընթացքում միշտն հաշվով ուտում ե 2-4 կիլո հացահատիկ կամ 7-8 կիլո կանաչ կեր: Բոլոր մկանման կրծողներին պայմանական կերպով բաժանում են յերկու մեծ խմբեր՝ լերկարապոչ և կարճապոչ մկների, ըստ վորում այդ խըմբերի մեջ մտնում


1 եզ կենդանու կողմաց դրա ու բաւդքը լրարկութեան բարձրացնելու մասին

1989




են բազմաթիվ տեսակներ: Սրանց բոլորի ատամները հարմարեցված են կարծր իրեր (հատիկ, ցողուն, արմատ, փայտ և այլն) կրծելու համար: Այդ իսկ պատճառով դրանց կոչում են կրծողներ, իսկ մյուս կրծողներից տարբերելու համար՝ մկանման կրծողներ: Թե կարճապոչ և թե յերկա-

բապոչ մկներն ապրում են վոչ խոր բներում: սովորաբար բների խորությունը հասնում է մինչև 33 սանտիմետր Մկներն ապրում են մեծ գաղութներով, այսինքն՝ բազմաթիվ ընտանիքներ միասին, սակայն դրանք բոլորը, բացառությամբ կրծով կերակրվող մկների, ունենալով են իրենց առանձին բները: Սովորաբար սրանք բներ են փորում քարքարոտ տեղերում (արոտատեղերում, միջնակներում), կոշտ չվարած հողերում (խոպաններում, ճանապարհների և առուների յեղբերին) և ավելի քիչ քանակությամբ՝ վարելահողերում:



Նկ. 2 Յերկարապոչ մկների մի տեսակը



Նկ. 3 Կարճապոչ մկների մի տեսակը
Դատնտեսությանը, ուտելով աշնանացանի ցողունները (գարնանը), իսկ հետագայում՝ հատիկը, հսկայական պաշար են կուտակում ձմեռված համար: Ավելի պարզ կլինի, յեթե հիշենք, վորյուրաքանչյուր մուկ տարեկան ուտում ե 2-4 կիլո հատիկ (իսկ վորմանք, որ Խամյակը՝ մինչև 10 կիլո) կամ 7-8 կիլո կանաչ մասսա: Հայաստանում մկներով վարակ-

ՊԱՅԱՐԵՆՔ
400.000 ՓՈՒԹ ՀԱՏԻԿԻ
ԿՈՐՍԻ ԴԵՄ

Մկները յուրաքանչյուր տարի հսկայական վասներ են հասցնում գյու-

ված տարածությունը մոտավոր հաշվառումով՝ հասնում է մինչև 200.000 հեկտարի, յեթե յուրաքանչյուր հեկտարի մկների խտությունն ընդունենք 10 (խտությունը մինիմալ է վերցրած և վորոշ տեղերում, որ Ալլահվերդու և Սիսիանի ջրաններում հասնում է մի քանի հազարի), և յեթե մեկ մկան կերած հատիկի քանակը մեկ տարում ընդունենք 3 կիլո, ապա միմիայն Հայաստանում մկները վոչնչացնում են յուրաքանչյուր տարի 400.000 փութ Կացահատիկ կամ ընդհանուր բերքի մոտ 13 % -ը, իսկ Խորհրդային Միության մեջ հասնում է հարյուրավոր միլիոն փթերի: Մկներն ապրում են դաշտերում՝ վարելահողերում, արտատեղերում, խոտհարքներում, խոպան հողերում, անտառներում, տնկարաններում և այլն: Վոչ վարելահողերում ապրող մկները ցանքերին նույնպես հսկայական վահաներ են, հասցնում թե հատիկը համնելու շրջանում, յերբ նրանք ուտառում և պաշար են դիզում (ավելի ուժեղ կերպով նկատվում են յերաշտի տարիներին, յերբ չորանում են անմշակ հողերի բուսականությունը) և թե դեռ հատիկը հասնելուց առաջ: Ահա թե ինչու մկները հանդիսանում են ամենավասարու կենդանիներ, սրանց տված վնասը հսկայական է: Մկների վորոշ տեսակները տարածում են նաև վարակիչ հիվանդություններ ազգաբնակչության մեջ. ուստի պետք է ձեռք առնվեն պայքարի բոլոր միջոցները (ազգութեանիկան, մեխանիկական, քիմիական, բիոլոգիական, նաև պաշտպանել ոգտակար կենդանիներին ու թուշուններին): Գրանց խպառ վոչնչացնելու համար:

ՊԱՅՔԱՐԻ ԱԳՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Մկների գեմ պայքարի ագրոտեխնիկական միջոցառումներն են հանդիսանում՝ 1. խոր հերկը, 2. ցանքաշրջանառությունը, 3. ջրովի հողերում արտերը ջրելը և 4. միաժամանակ՝

կարճ ժամանակամիջոցում բերքահավաքն սկսելն ու վերջնելը:

1. Խոր հերկի ժամանակ քանդվում են մկների բները, և նրանք ստիպված են լինում կատարել տեղափոխություններ: Միաժամանակ կորում է նրանց կուտակած մնադի պաշարը, և նրանք, ընկնելով նոր տեղեր՝ վոչնչանում են մնադի պակասությունից կամ թե կատարած տեղաշարժումների ժամանակ (յերեմն մեծ տարածությունների վրա), վոչնչանում են ճանապարհին գիշատիչ թռչունների (բռւ, բաղե և այլն) և գաղանների (աղվես, աքիս, ժանտաքիս և այլն) կողմից կամ ուղղակի սովոր ցըտից:

2. Ցանքաշրջանառության միջոցով փոխվում է մշակվող կուլտուրան, նրա հետ միասին՝ մկների կերի հսկամարդությունները և, վոր շատ կարևորն են, հողի խոնավությունը և մշակումը: Կուլտուրայի փոխվելու հետևանքը լինում է նա, վոր այն մկները, վորոնք իրենց կյանքը հարմարեցրած են լինում հացահատիկային կուլտուրաներին, նոր կուլտուրա մշակվելուց հետո նրանք կամ փոխադրվում են նոր հողամասեր, կամ թե, յեթե մնում են ել, զգալի կերպով պակսում են նրանց քանակը:

3. Ջրովի հողամասերում արտերի ջրելը համարյա թե 100 % -ով վոչնչացնում, ջրահեղձ և անում դաշտում բնակվող մկներին:

4. Միաժամանակ կատարած բերքահավաքը համեմատաբար կարճ ժամանակամիջոցում ավարտելը և մաքուր հավաքելն ուրիշ առավելությունների հետ միասին ունի նաև հետեւյալ նշանակությունը. ա) դաշտերը մերկանում են և հնարավորություն են տալիս մուտք գործել գիշատիչ կենդանիներին և թռչուններին, վորոնք հենց այդ ժամանակ հսկայական վնասներ են հասցնում մկներին. բ) մկները զրկվում են հնարավորությունից մեծ պաշար-

Ներ կուտակելու, վորն զգալի կերպով ազդում ե նրանց ձմեռային սննդի և, վորպես հետևանք, նրանց ունեցած սերնդի վրա. գ) բացի դրանից, ուժեղ կերպով և միանգամից փոխվում են մկների բնակավայրերի մթնոլորտային պայմանները, այսինքն՝ հողի ջերմաստիճանը և խոնավությունը փոխվում են և այդ հանգամանքն զգալիորեն իջեցնում ե մկների քանակությունը:

Բացի նշված միջոցներից, մկների բազմացման ու տարածման վրա, ինչպես և նրանց վնասակար գործողության վրա բացասական ազդեցություն են ունենում.

1. Դաշտերի մեջ գտնվող քարերի կույտելի, թփուտների և կոշտերի վերացումը:

2. Դաշտերի մեջ առուների և ճանապարհների յեզրերին գտնվող մոլախոտերի վերացումը քաղնանի և մաքուր ու մի քանի անգամ կը կնվող հնձի միջոցով:

3. Եղերի, շտեմարանների շուրջը հատուկ առուներ փորելը (լայն հատակով և ավելի նեղ մակերեսով ու հարթ պատերով):

ՊԱՅՔԱՐԻ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Պայքարի այս ձեր կիրառվում ե հատկապես զանազան տեսակի թակարդների միջոցով, վորոնց միջոցով պայքար պետք ե տանել տներում և պահեստներում, վորովիետե պահեստներում և բնակարաններում յեղած մկները հանդիսանում են մասսայական բազմացման վայրեր թե տնային (վորոնք վնասում են նաև դաշտային կուլտուրաները) և թե դաշտային մկների։ Բացի դրանից, մկների մասսայական բազմացման տարիներին, յերբ նրանք հսկայական քանակությամբ հավաքվում են խոտի և դարմանի դեղերում, վորպես պայքարի միջոց առաջարկվում են նրանց այրումը, վոր պետք ե կատարել հետեւ վյալ կերպ. դեղի վերևից աստիճանաբար վերցվում ե

դարմանը և տեղափոխվում՝ ուրիշ տեղ (մի քանի մետր հեռավորության վրա) և նորից դեղ դրվում, մկները վերևից իջնում են ներքեւի շերտը, և յերբ մկների քանակը շատ ե լինում, դեղի մնացած կես մետրանոց շերտն այրում են։ Նախքան այս աշխատանքը կատարելը թե հին և թե նոր դեղերի շուրջը պետք ե փորել վերը նշած ձեր առուները։

ՊԱՅՔԱՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Պայքարի ագրոտեխնիկական և մեխանիկական միջոցառումները մկների վոչնչացման գործում ունեն ոժանցակիչ նշանակություն։ Ավելի կարևոր նշանակություն ունեն պայքարի քիմիական միջոցառումները, վորոնք պետք ե տարվեն մեծ տարածությունների վրա, միաժամանակ վորակով, և ընդգրկեն մկների բոլոր բնակավայրերը։ Այդ պատճառով, նախքան պայքարին անցնելը, հարկավոր ե ի հայտներել նրանց բոլոր բնակավայրերը՝ բների կուտակումները — գաղութները, թե դաշտերում և թե հետագա ցելահողամասերում, խոպան ու անմշակ հողերում, արոտավայրերում, խոտհարքներում, անկարաններում ու անտառամասերում և այլն՝ կոլխոզների ու գյուղխորհուրդների կողմից կազմակերպված հատուկ հետազոտության միջոցով։ Հետազոտության միջոցով պարզել ընկնող ընդհանուր ու կենդանի բների միջին քանակը՝ հողժողկոմատի պայքարի բաժնի հատուկ հրահանգի ձևով (տես «Ինչպես հետազոտել մկներով վարակված հողամասերը») ու ապա նոր անցնել պայքարի։ Մկների գեմ քիմիական պայքարը պետք է տանել տարեկան 2 անգամ։ Առաջինը՝ վաղ գարնանը, ձյունը հալվելուց անմիջապես հետո և, յերկրորդը՝ աշնանը՝ բերքահավաքը, աշնանացանը և աշնանահերկն ավարտելուց հետո, սակայն այն հաջվով, վոր Պայքարի աշխատանքները վերջացվեն նախքան ձյան գալը։ Պայքարի, հատկապես

գարնանային պայքարի ժամանակին կատարելն ունի վճռական նշանակություն, վորովինետև մկներն այդ ժամանակ, չնորհիվ իրենց կողմից կուտակած ձմեռային պաշարի վերջանալուն, կերի պակաս են զգում, ուստի ավելի թուլակազմ են լինում, հեշտ են ընդունում թունավոր գրավչանյութը և դրա պատճառով պայքարի արդյունքներն ավելի մեծ են լինում, մինչդեռ հետագայում, յերբ պայքարն ուշացնում ենք, դաշտերը ծածկվում են մոլախոտերով, մկները մնվում, կազդուրվում են, քիչ դեպքում են ընդունում թունավոր գրավչանյութը, քիչ մահացության դեպքեր են լինում, ուստի և եփեկտիվությունն ավելի ցածր ե լինում:

Մկների դեմ պայքարում են թունավոր գրավչանյութով, այսինքն՝ թունի հետ խառնում են գրավիչ (ալյուր, ցորեն, լավ թխած հաց և այլն) նյութեր, և այդ խառնուրդը, վորպես խմոր հաց կամ հատիկ, մկներն ընդունելով՝ թունավորվում, կոտորվում են: Փորձը ցույց է տալիս, վոր մկները վոչ բոլոր դեպքերում ե, վոր ուտում են այդ թունավորված գրավչանյութը, դրա հիմնական պատճառներից մեկն է հանդիսանում գրավչանյութի մեջ վոչ հավասարաչափ կերպով թուն ծծեցնելը, ուստի թունավոր գրավչանյութը պատրաստելիս պետք է ուշադրությամբ կիրառել պահանջող կանոնները:

Խնդիր պատրաստել թանավոր գրավչանյութը

Թունավոր գրավչանյութը պատրաստվում է հետևյալ կերպ՝ յուրաքանչյուր կիլոգրամ գրավչանյութի (ալյուր, յեգիպտացորեն, ցորեն, լավ թխած հաց) համար վերցնում ենք 40-ից 65 գրամ թուն—արսենիտ նատրի կամ, ինչպես սովորաբար ընդունված ե ասել, կազմում ենք 1:15 մինչև 1:25-ի հարաբերությունը: Վերցված թունը լուծում ենք

ջրի մեջ և այդ ստացված լուծույթի մեջ ենք գցում գրավչանյութը: Լուծույթի մեջ գրավչանյութը պետք է պահել այնքան, վոր լավ ծծի իր մեջ թունը (ալյուրը շուտ ծծելու պատճառով ավելի քիչ են պահում, թխած հացը՝ նրանից ավելի շատ, իսկ յեգիպտացորենը և ցորենը՝ բոլորից շատ): Գրավչանյութի ծծողական հատկությունն ունի վճռական նշանակություն, ուստի այնպես պետք է ծծեցնել, վոր հավասարապես ծծված լինի գրավչանյութը:

Ծծեցնելուց հետո ստացված խմորը կտրառում ենք փոքր գնդիկների՝ կաղինի (անդուկի) մեծությամբ, հացը նախքան ծծեցնելը պետք է կտրառել նույն մեծությամբ ու նոր լցնել լուծույթի մեջ, իսկ յեգիպտացորենն ու ցորենը թողնում ենք նույնությամբ:



Նկ. № 4

Յերկարապոչ մկների դեպքում թունը կարելի յե վերցնել 1—25-ի, իսկ կարճապոչ մկների դեպքում՝ 1—15-ի հարաբերությամբ: Զուրը պետք է վերցնել այնքան, վոր պեսզի վերցրած թունը լուծվի նրա մեջ, և գրավչանյութն ստացված լուծույթը լրիվ կերպով ծծի իր մեջ. սովորաբար պատրաստում են 1,5⁰/₀-ից մինչև 7,5⁰/₀ խտությամբ լուծույթ, այսինքն՝ յուրաքանչյուր մեկ միավոր թունը կարելի յե լուծել 13-ից մինչև 40 անգամ ավելի ջրի մեջ, կարելի յե լուծել 13-ից մինչև 40 անգամ ավելի ջրի մեջ, նայած գործադրվող գրավչանյութի ծծողական հատկության: Վճռական նշանակություն ունի նաև գրավչանյութը ցըելու ձևը: Թունավոր գրավչանյութը պետք է անպայման դնել բների մեջ և միանգամայն արգելել շաղ տալը դաշտերի և այլ հողամասերի մեջ: Գրավչանյութի շաղ տալը, բացի նրանից, հողամասերի մեջ:

Վոր շատ քիչ դեպքում եւ հասնում նպատակին, ունի նաև այն բացասական կողմը, վոր ընտանի կենդանիները նույնպես թունավորվում են և տեղի յեն ունենում մահացության դեպքեր։ Ընտանի կենդանիներին նման դեպքերից զերծ պահելու համար կոլտնտվարչությունները և գրւղխորհուրդները, պայքարն սկսելունախորյակից սկսած՝ պետք եւ տանեն լախ բացատրական աշխատանք ազգաբնակչության մեջ, արգելելով կենդանիների արածեցնելը թունավորված հողամասերում։

Խնչ դեպքում, յերբ յեզ ինչպես պայքարել մկների դեմ
Քլորպիկրինի միջոցով

Մկների դեմ սովորաբար քլորպիկրինով պայքար չի տարվում, բայց ան դեպքում, յերբ արսենիտ նատրիումով պատրաստված թունավոր գրավչանլութի միջոցով կազմակերպված պայքարը չի կանխում, կամ զգալիորեն պակսեցնում մկների ավելիչ գործունեյությունը, այդ դեպքում կարելի լե հատուկ շրջաններում կամ, ավելի շուտ, հատուկ մասսիվների վրա, վորպես բացառություն, առաջարկել քլորպիկրինի գործածությունը։

Վերը նշված պարմանները կարող են տեղի ունենալ միայն մկների մասսայական բազմացման տարիներում, չափազանց ուշացված պայքարի ժամանակ, յերբ նրանք վնասում են ցանքսերին, և գրավչանլութի նշանակությունը կորչում է։ Թանի վոր մկների բները խոր չեն լինում, ունենում են բազմաթիվ անցքեր, ուստի շատ դժվար ելինում անցքերի հերմետիկ փակումը, հետևապես, վորպես պայքարի ամենահիմնական միջոց, դժվարանում ելուրպիկրինի գործածությունը։ Ուստի այս միջոցը դժվար կիրառելի յե, թանգարժեք (բանուժ անհամեմատ շատ ե պահանջում), պահանջում ե մեծ զգուշություն, բայց և

այնպես պայքարի այդ ձևից հրաժարվել չի կարելի, պայքարը ճիշտ կազմակերպելու դեպքում արդյունքը լինում ե շատ բարձր, և մկների մահացությունը համար ե 100 տոկոսի։

Քլորպիկրինն ուժեղ և գաղացազ թույն ե, նա ազդում ե կենդանիների վրա վորպեսզի խեղդող գաղ, ուստի նրան պետք ե մացնել մկների բները և հերմետիկ կերպավ փակել բնի բոլոր անցքերը, վորպեսզի գաղը մնա բնի մեջ և խեղդի մկներին։ Բայց յեթե բնի բոլոր անցքերը



Նկ. 5 Մկների բների թունավորումը քլորպիկրինով

հերմետիկորեն չփակվեն, քլորպիկրին գաղը բնից դուրս կգա, և մենք մեր նպատակին չենք հասնի։ Մեկ մուկ խեղդելու համար բավական ե վերցնել $0,1-0,3$ գրամ քլորպիկրին, ուստի մենք զալբարելու համար պատրաստում ենք բամբակից մանր գնդիկներ՝ կաղինի (պնդուկի) մեծաւթյամբ, հագցնում նրան ձողիկի ծայրերին և ապա դաշտում ալիդ բամբակալա գնդիկը թաթախում մեղ հետ վերցված քլորպիկրինի շահ մեջ այնքան, վոր համապատասխան քանակի թույն ծծվի, և անմիջապես մտցնում բնի

մեջ ու ծածկում հողով և լավ տրորում վոտքով։ Զպետք ե մոռանալ, վոր ինչպես գրավչանյութի դեպքում, նմանապես և այս դեպքում, նախքան պայքարին անցնելը, հարկամոր և գաշտում գտնվող բոլոր բների անցքերը լավ տրորելով փակել և ապա նոր անցնել պայքարի։

ՊԱՅՔԱՐԻ ԲԱԿՏԵՐԻԱԼ ՄԵԹՈԴԸ

Այս մեթոդի նպատակն ե՝ նախորոք պատրաստված մինային տիֆի բացիկի միջոցով, վորը խառնում ենք գրավչանյութի (ալյուրի խմբի) մեջ, տիֆով վարակել նրանց։ Նկատի ունենալով այն հանգամանքը, վոր այս մեթոդի կիրառումը պահանջում է վորոշ հմտություն և մեծ զգուշություն թե գրավչանյութի պատրաստման, գործադրման և թե կուլտուրայի (բացիլային շիճուկի) պահելու համար, ուստի այս մեթոդով պայքար կարելի յե կիրառել միմիայն մասնագետի անմիջական ղեկավարությամբ։ Կուլտուրան ստացվում ենախօրոք պատրաստված շերի մեջ, բերանն ամուր փակած դրությամբ շշի վրա նշանակված ե պատրաստելու ժամանակը, վորը կարելի յե գործադրել պատրաստելու որից մինչև 45 որ անցնելը, վորից հետո կորցնում ե իր ուժը։ Կուլտուրան պետք ե պահել 1-ից մինչև 10 աստիճան շերմության մեջը սու Ցելսիուսի նշվածից ցածր և բարձր շերմաստիճանում պահելու դեպքում զգալիորեն կորցնում ե իր ուժը։ Բացված շշի կուլտուրան ու նրանից պատրաստած գրավչանյութը պետք ե գործադրել անպայման նույն որը։

Գրավչանյութը պատրաստելու համար վերցնում ենք մեկ լիտր կուլտուրա, նրա հետ խառնում չորս լիտր ջուր և վրան ավելացնում 1 կիլոգր. 200 գրամ ալյուր ու պատրաստում խմոր։ Ստացված խմորը կարտում ենք և, գլորելով, վեր ենք ածում յերշիկաձև մասերի ու ալս վեր ջինից կտրում անտառային ընկույզի (մանր ընկույզի)

մեծությամբ գնդիկներ։ Այդ գնդիկները դրվում են կամ բների մեջ կամ թե բների մոտ։ Բացի ալյուրից, կարելի յե վորպես գրավչանյութ ոգտագործել կիսախաշած ցորեն, վոր ծծեցնելով կուլտուրայի մեջ՝ թեյի գղալով նույնպես լցնում ենք բնի մեջ կամ բնի մոտ։ Այս մեթոդի կիրառման դեպքում կարելի յե գրավչանյութը դնել յուրաքանչյուր 7—8 բնից միայն մեկի մեջ, վորից վարակը տարածվում ե միների միջոցով մյուս բներում։ Մահացությունը տեղի յե ունենում 4—5 որից և տևում ե մինչեւ 14 որ՝ գրավչանյութը դնելուց հետո։ Գրավչանյութը պետք ե դնել հով ժամանակ՝ ավելի լավ ե լերեկոյան դեմ։ Գրավչանյութը պետք ե պատրաստել հատուկ տեղերում (արգելվում ե կատարել ճազարանոցներում, պահեստներում, բնակարաններում և այլն) ու պատրաստելուց հետո ձեռքերը, սեղանները, գործիքները և այլն ոճառով լվանալ։ Ամբողջ աշխատանքի ժամանակ արգելվում ե ծիսել։ Սովորաբար մարդկանց նկատմամբ անվտանգ ե, վտանգը կարող ե սպառնալ այն դեպքում, յերբ ուտեն, ուստի պետք ե հետևել, վոր յերեխաները չուտեն։

Մկների բնական թշնամիներն են՝ բուն, բազեն, աքիսը, ժանտաքիսը, աղվեսը, կատաւն և այլն, վորոնք մկներին կենդանի վօրսալով՝ հսկայական ծառայություն են մատուցում ազգաբնակչությանն այս վերին աստիճանի մսասատու կրծողների՝ մկների վաչնչացման գործում։ Ուստի ամեն կերպ պետք է աշխատել պաշտպանել այս կենդանիներին ու թուչուններին, հսկել վորպեսզի վօրսորդները դրանց վորսալու խնդրում ճշգրիտ դեկավարվեն գոյություն ունեցող վորսշաւմներով։

Բնական հետազոտել մկներով զբաղեցրած հոգամասերը

Մկներով զբաղեցրած հոգամասերը պետք է հետազոտել կատարվելիք յաւրաքանչյուր պարարից առաջ, այսինքն՝ առաջինը վաղ գարնան, ձյունը հալվելուց անմիջապես հետո՝ գարնանային պարարը առնելու համար, յերկրորդը՝ բերքահավաքից անմիջապես հետո՝ աշնանային պայքարի համար և յերրարդը՝ աշնանացանը և աշնան պայքարն ավարտելուց հետո՝ ձմեռող մկների պաշարը պարզելու, հաջորդ տարվա պայքարը կազմակերպելու համար։ Հետազոտության հիմնական նպատակն՝ և հայտաբերել նրանց կողմից զբաղեցրած տարածությունը, բնակվայրերը, ընդհանուր և կենդանի բների քանակը, վորպեսզի հետազոտում տարվի վոչ թե ամեն մի տեղ, այլ նախորոք հետազոտված, ողլանաձեւ և ստացվի մաքսիմալ եֆեկտիվություն։ Հետազոտությունը պետք է տանել հետեւյալ կերպ։ Հետազոտվելիք լուրաքանչյուր 50 հեկտար հողամասի (վարելահող, արտավալը, խառան, տնկարան և այլն) համար վերցնում ենք (այսինքն վոչ այնտեղ, վորտեղ բները չտան և վոչ այնտեղ, վորտեղ քիչ են, այլ բների միջին խտություն ունեցող տեղում) մի հողակտոր՝ 100

քառ. մետր տարածությամբ (10 մետր յերկարությամբ և 10 մետր լայնությամբ), վորի սահմանները քարերով նշելուց հետո յերեկոյան դեմ այդ հողակտորում հաշվում ենք բոլոր յեղած բների քանակն ու գրանցում հարցաթերթիկի սյունակում։ Յենթագրենք 50 բուն. դա կիխնի բների ընդհանուր քանակը։ Հետո այդ բոլոր յեղած բները հողով ծածկում ենք ու վոտքով տրորում և մյուս որն առավոտյան նույն հողակտորում հաշվում բացված բների քանակը, յենթագրենք 20, ու նույնպես գրանցում հարցաթերթիկի 5-րդ սյունակում, դա կիխնի կենդանի բների քանակը։ Յեթե հետազոտվելիք բոլոր հողերը բրիգադում կազմում են 250 հեկտար, ապա պետք է վերցնել 5 տեղում հողակտորներ ու առանձին-առանձին հաշվել ընդհանուր ու կենդանի բների քանակը և նույնպես գրանցել. յենթագրենք այդ 5 հողակտորից 1-ում բներ չենք հայտաբերել, դա նշանակում է, վոր այդ հողամասը մկներով զբաղված չե, ուստի չենք զբանցում։ Տվյալ տարածության վրա հաշված թե ընդհանուր և թե կենդանի բների քանակը, բազմալատկում ենք 100-ով, և դա կիխնի մեկ հեկտարի վրա գտնվող ընդհանուր ու կենդանի բների քանակը, վորոնք գրանցում ենք հարցաթերթիկի 6-րդ և 7-րդ սյունակում։ Յեթե հողամամն ունի 135 հեկտար մեծություն, ապա վերցրած 3 հողակտորներում յեղած ընդհանուր և կենդանի բները գումարում ենք ու ապա բաժանում 3-ի, ստացվում ե ընդհանուր և կենդանի բների միջին քանակը և ըստ այդ գրանցում ենք։ Հարցաթերթիկի 3-րդ սյունակում գրանցել միմիայն գերիշխող տեսակի անունը «յերկարապոչ» կամ «կարճապոչ»։ Հարցաթերթիկը լրացնելուց հետո պետք է հանձնել կոլխոզի կամ գյուղխորհրդի գրասենյակը։ Վերջիններս ամբողջ աշխատանքները վերջացնելուց հետո մեկական որինակը թողնում են իրենց մոտ՝ պարարի ժամանակ գեկավարվելու համար, իսկ մյուսն ուղարկում շրջանի

ՄՏ կայան կամ Հողբաժին: Վերջիններս ամբողջ շրջանի աշխատանքներն ավարտելուց հետո ամփոփում և ուղարկում են Հողժողկոմատի պայքարի բաժնին:

1. Շրջան՝ Ալլահվերդի, գյուղ՝ Ճոճկան, կոլխոզ՝ բրիգադ № 2 հետազոտությունն սկսված է 20/III, ավարտված է 23/III:

| Հողամասի անունը և տեսակը | Միներիտե- սակը «կար- ճապաչ», թե «յերկարա- պոչ» | Հետազոտված հողամասի տարածությունը հեկտարի | | Բների միջին թիվը մեկ հեկտարի վրա | |
|-----------------------------|--|--|-------|-------------------------------------|-------|
| | | Ընդունակությունը | Վարից | Վարից | Վարից |
| Ցամաք ցեղ | Ցերկարապոչ | 100 | 50 | 5000 | 2000 |
| Աշնանացան | » | 150 | 150 | 4180 | 2150 |
| Արոտավայր | Կարճապոչ | 135 | 135 | 1750 | 650 |

ԿՈՂՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴԱՀ
ԲՐԻԳԱԴԻՒՄ

ՍՈՒՍԼԻԿՆԵՐ

Սուսլիկները կամ, ինչպես ասում են մի քանի շրջաններմ, ճատան միները նույնպես հանդիսանում են հացահատիկային կուլտուրաների թշնամիները և յուրաքանչյուր տարի հսկայական վնասներ են հասցնում: Սուսլիկները չայաստանում տարածված են՝ Ամասիայի, Լենինականի, Սրբիկի, Թալինի, Աղարանի և Կիրովականի շրջաններում, սակայն գիտական հետազոտության բացակայության պատճառով չի կարելի յենթադրել, թե մյուս շրջաններն իսպառ ազատ են այս վնասատություն: Հայվորսորդկոոսի տվյալներով, սուսլիկների մորթիները մթերքած են նաև Դիլիջանի շրջանի Նաղեծղինո գյուղի շրջակայքում, սակայն շատ քիչ քանակով: Այս հանգամանքն ապացուցում է սուսլիկների

ներկայությունը Դիլիջանի և, թերևս, Բասարգեչարի շրջաններում: Սուսլիկները միներից բավականին մեծ են վնասը, մարմնի յերկարությունը հասնում է մինչև 30 ամ.: Սուսլիկները ցերեկային կենդանիներ են, առավոտյան գետինը տաքանալուց հետո դուրս են գալիս իրենց բներից և կերակրվում: Շոգ, անձրևային, ցուրտ ու քամի որերին բներից դուրս չեն գալիս: Սուսլիկները մնվում են բացառապես հացահատիկային կուլտուրաներով և այդ ընտանիքներին պատկանող մորթախոտերով: Ցուրաքանչյուրը սուսլիկ մեկ տարվա ընթացքում ուտում է 8—16 կիլո հացահատիկ կամ նրան համապատասխան քանակի կանաչ մասսա: Ցեթե՛ յուրաքանչյուրը հեկտարի վրա գտնվող



նկ. 7.

սուսլիկների քանակը միջին հաշվով ընդունենք 30 և նրանց մեկ տարվա կերած հացահատիկի քանակը՝ 10 կիլո, իսկ չայաստանի 5 շրջանների սուսլիկներով զբաղեցրած (վարակված) հողերի տարածությունը 10 հազար հեկտարից ավելի յե, ապա միմիայն չայաստանում յուրաքանչյուր տարի նա վոչնչացնում է 3000 տոնն կամ մոտավորապես 200.000 փութ հացահատիկ կամ ընդհանուր բերքի մոտա-

վորապես 6—6,5 տոկոսը՝ վորոշ տեղերում մեկ հեկտարի քառակի թիվը հասնում է մինչև 80-ի:

Սուսլիկներն իրենց վարած կյանքով խիստ տարբերավում են միներից. Նրանք ամառվա յերկրորդ կեսից, այսինքն՝ հունվարի 20-ից սկսած քուն են մտնում, վորը տեսում է մինչև մարտ ամիսը, մի հանգամանք, վոր միների մոտ բալորովին չի նկատվում։ Սրանք տարվա ընթացքում ունենում են միայն մեկ ծին և ծնում են 4—8 հատ ձագ։ Յուրաքանչյուր սուսլիկ ունենում է իր բունը, վոր բավականին խոր և լինում և հասնում է մինչև $1\frac{1}{2}$ —2 մետր խորառթյան, վորը հանդիսանում է նրա մշտական բունը։ Բացի մշտական բնից, սուսլիկներն ունենում են նաև ժամանակավոր բներ, վորոնք ունենում են ավելի պարզ կազմություն (տես նկարը 2) և վորոնք գտնվում են մշտական բնից յերբեմն հեռու։ Ժամանակավոր բներն ողտագործում են վտանգից պատապարվելու համար կամ յերբ կերը գտնվում է մշտական բնից հեռու։ Սուսլիկները սնվում են մինչև հունվարի 15—20-ը, իսկ ձագերը՝ մինչև ոգոս-

տոսի վերջը և ապա հողով անցքը ներսից փակելով՝ քուն են մտնում։ Սուսլիկները նույնպես ապրում են գաղոթաներով, և վտանգ յեղած դեպքում ճատացնելով մյուսներին իմաց են տալիս ու թագնվում բներում։ Սրանց բները գտնվում են կողմանը հողերում՝ խոպաններում, միջնակներում, ճանապարհների ծալքամասերում։ միշտ իրենց համար փնտրելով այնպիսի հողեր, վորոնք պաշտպանված են լինում զարնանային անձրեներից, զանազան ջրերի հոսանքներից և այլն։ Վարելահողերում յեղած բները միմիայն ժամանակավոր են լինում և ոգտագործում են կերակրվելու ժամանակ։


ՊԱՅՔԱՐԻ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՅԵՎ ԿԱՆԽՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Պայքարի ագրոտեխնիկական միջոցառութները հիմնականում նույն են, ինչ վոր շեշտված է միների դեմ պարագարի խնդրում։ Ինչ վերաբերում է կանխող միջոցառութներին, ապա այստեղ ես կարելի յե առաջարկել, հնարավորության դեպքում, ցանքսերը միացնել իրար հետ՝ միշնակների վերաբերմամբ, վորպեսզի ցանքսերի և սուսլիկներով վարակված հողերի սահմանագիծն ավելի քիչ լինի։

ՊԱՅՔԱՐԻ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Սուսլիկների մորթին արժեքավոր մորթի յե, և դրա պատճառով դեռ շատ վաղուց մորթի մթերող կազմակերպությունները, իսկ մեզ մոտ՝ Հայվորսորդկոոպը լուրջ ուշադրություն են դարձրել սուսլիկների պայքարի գործի վրա և, պայքարին զուգընթաց, կատարում են մորթու մթերում, իսկ վորոշ տեղերում՝ նաև ճարպի և մսի մթերման համար (մսի և ճարպի մթերումը կատարվում ետեւնիկական նկատառութներով)։ Սուսլիկների դեմ մեխանիկական պայքար են տանում յերկու յեղանակով։ առա-

Ջինը թակարդների (կապկանների) միջոցով: Թակարդները լինում են տարրեր ձևի, ամենակատարելագործվածը՝ շղանակածե թակարդները՝ կապկաններն են (տես նկ. 9):



Նկ. 9. Սուսլիկը աշանակածե թակարդի մեջ

Այս թակարդները դնում են սուսլիկներով վարակված հողերում, վրայից թեթև կերպով դիմակավորում բուսականությամբ, և սուսլիկները շատ հեշտությամբ են բռնվում: Պայքարի մեխանիկական մյուս միջոցն ե ջրահեղձը: Այդ նպատակով այնտեղ, վորտեղ հնարավոր ե, դաշտ են տեղափոխում ջուրը տակառներով, կամ ուղղակի դույլերով, յեթե մոտակա տեղերից ջուր ե հոսում: Ապա ջուրն ածում են բունը, սուսլիկները կիսախեղդ յինելով, բներից դուրս են գալիս, և անմիջապես կարելի յե բռնել սուսլիկներին, մորթել ու հանել մորթին: Այս միջոցը կարելի յէ կիբառել գարնան ամիսներին, յերբ հնարավոր ե դաշտի մոտակա առուներից հոսող ջրերն ողտագործել: Պայքարի մեխանիկական միջոցառումները պետք ե տարվեն քիմիական միջոցառումների հետ զուգընթաց:



Նկ. 10. Սուսլիկների գործառն ջրահեղձի մեջ

Սուսլիկների դեմ պայքարելու քիմիական միջոցներից ամենատարածվածը և ամենաեֆեկտավորը Շնչահեղձումն է ինքառիկրինի սիցոցով: Քլորպիկրինը շատ ուժեղ և ուշ գազացող հեղուկ թույն է և յուրաքանչյուր մեկ սուսլիկ խեղդելու համար բավական է մեկ գրամ քլորպիկրին, վորը հարկավոր ե մտցնել բնի մեջ: Քլորպիկրինով շնչահեղձումը (խեղդումը, թունավորումը) պետք է կատարել հետեւյալ կերպ՝ բամբակից կամ պակլյայից պատրաստում




Նկ. 11

պակլյայի գնդիկների հետ միասին) ու կապել: Հարկավոր ե քլորպիկրինը լցնել շատ մեջ: Քլորպիկրինից չթունավորվելու համար հարկավոր ե հակագաղ հագնել, ապա նոր լցնել շատ մեջ (Նկ. 11): Քլորպիկրինի շատ մեջ լցնելու ժամանակ հարկավոր ե այդ աշխատանքը կատարել անպայման դրսում, այլ վոչ թե շենքերում և յեթե լցնելիս քլորպիկրինը թափվի շորերի, ձեռքի, գետնի և այլ բաների վրա, անհրաժեշտ ե շուտափույթ կերպով ձեռքերն ոճառով լվանալ, շորը հանել, գետնի վրա հող ածել և այլն: Ընդհանրապես դաշտային պայմաններում քլորպիկրինի հետ չի կարելի գործ ունենալ առանց հակագաղի. անըդ-

գուշության գեղագում կարող են տեղի ունենալ թունահորման դեպքեր:

Դաշտում քլորպիկրինի միջոցով շնչահեղձելու համար վերջնում են քլորպիկրինի շիշը, նախորոք պատրաստած ձողիկները (բամբակյա, պակլյայի), ծայրերին գնդիկներ, և մի թիակ, հետո բամբակյա գնդիկը թաթախում են քլորպիկրինի շատ մեջ վորտեղ պահում մի քանի վայրկյան,




Նկ. 12. Սուսլիկների շնչահեղձումը քլորպիկրինի միջոցով

վորպեսզի մեկ գրամի չափ քլորպիկրին ծծի իր մեջ. ապա բամբակյա կամ պակլյայի գնդիկները քլորպիկրինով ծծեցնելուց հետո շատ մեջ բերանը պետք է փակել խցանով, հետո չոքել մեկ վորքի վրա ու գնդիկը ձողիկի հետ միասին ձգել անցքի մեջ ու փակել թիակով: Ցեթե անցքի բերնից սկսած՝ բնի ուղղության առաջին մասը նեղ ե, հարկավոր ե թիակով անցքը լայնացնել ու ապա նոր դնել գնդիկը: Քլորպիկրինն ազդում է սուսլիկների աչքերի

վրա, վորպես արցունքաբեր և վորպես խեղդող զազ, և այդ պատճառով նա հանդիսանում է ամենաեփեկտավոր պայքարի միջոցը:

Բ ՆԱԿԱՆ ԹՇԱՄՏՆԵՐԸ

Սուսլիկների գեմ պայքարի խնդրում նրանց բնական թշնամիների դերը շատ նշանավոր է: Սուսլիկների թշնամիներն են՝ ժանտաքիսը, աքիսը, կնգումը (սպիտակ կղա-



Նկ. 13 Կնգումը սուսլիկ ուսելիս.

քիս), շամբաճառակը (մոլաճառակ), ցինը, արծիվը, բազեն և մի շարք այլ կենդանիներ ու թուչուններ: Այս գիշատիչ կենդանիների և թուչունների կերի մեծ մասը սուսլիկներով զբաղեցված շրջաններում է հատկապես գարնան, ամռան ամիսների ընթացքում, կազմում էն սուսլիկները: Բավական է հիշել, վոր մեկ ժանտաքիսը մեկ տարվա (սե-

զոնի) ընթացքում ուտում է մինչև 300 սուսլիկ: Ուստի մեր տեղական մարմինները (շրջութեղիսմիները, գյուղաբնորհութերը) և հասարակական մարմինները պետք է հսկեն, վոր վորսորդները հզգրիտ կերպով կիրառեն կառավարության վորոշումները, այս կենդանիների և թուչուններին կատամարմբ սահմանված վորսի ժամկետները, և ժամկետից առաջ, հատկամանված վորսի ժամկետներին սրանց վորսն արգելեն:

Խնձանս հետազոտել սուսլիկներով զբաղեցրած (կարակված) հողերը

Սուսլիկների հետազոտությունը կատարում էն տարեկան յերկու անգամ՝ գարնանը՝ գարնանային պայքարը տանիելու համար և յերկրորդը՝ հուլիսի սկզբից՝ նրանց ձմեռող պաշարը պարզելու համար: Հետազոտությունը կատարվում է հետևյալ կերպ. սուսլիկներով զբաղեցրած հողերի յուրաքանչյուր 100 հեկտար հողամասի համար վերցնում ենք 0,5 հեկտար (50×100 մետր) հողակտոր, ապա հաշվում յեղած բոլոր բները և ստացված թիվը յենթագրենք 27 , բազմապատկում 2-ով , կստանանք 54 , վորը կլինի բների ընդհանուր քանակը, վոր և գրանցում ենք հարցաթերթիկի համապատասխան սյունակում: Հետո բոլոր բների մեջ լցնում ենք ծղութ և վրայից հողով ծածկում, մյուս առավոտյան ժամը 10-ից վոչ առաջ հաշվում ենք բացված բների քանակը, յենթագրենք 14 . այս վում ենք բացված բների քանակը, վոր և թիվը նույնպես բազմապատկում 2-ով (28), նույն թիվը հարցաթերթիկի համապատասխան սյունակում վորպես գրանցում համապատասխան սյունակում վորպես կենդանի բներ: Սուսլիկները կարող են փակված բները կենդանի բների բառությամբ կարելի յերացել նաև վրայից, վորը շատ հեշտությամբ կարելի է բացվել այլ գեպքերում այլպիսի բները, վորպես կենդանի բներ, հաշվի չեն առնվում: Իսկ բերքահավաքից հեղանի բները, հաշվի չեն առնվում: Այս կարգությունը կատարել բոլոր (խոպան, անմշակ արոտ և այլն) հողերում: Այս հետազոտությունը կատարվում է հետևյալ կերպ, նախ ընտրում են մարշրուտը,

վոր պետք ե հետազոտվող հողակտորի (50 հեկտարի չափ) միջով անցնի, ընդգրկելով թե բարձունքները և թե ցածրադիր մասերը, ապա 2 հոգով սկսում են հետազոտությունը. մեկն առաջից տանում ե կիսաշրջանակը (տես նկարը) $2^{1/2}$ մետր լայնությամբ և հաշվում քայլերը և, յուրաքանչյուր 1350 քայլն ընդունելով մեկ կիլոմետր, այսինքն՝ 1000 մետր, իսկ մյուսը հաշվում ե այդ $2^{1/2}$ մետր տարածության վրա ընկած բների քանակը և այդ 1350 քայլի վրա ընկած բների քանակը բազմապատկում 4-ով ստացված թիվը կլինի մեկ հետարի վրա գտնվող բների ընդհանուր քանակը, իսկ կենդանի բների քանակն ունենք վորոշված հուլիսից, այսինքն սուսլիկների քուն մտնելուց առաջ, վորոնք և գրանցում ենք հարցաթերթիկի համապատասխան սյունակում: Աշխատանքներն ավարտելուց հետո ուղարկվում են շրջանի հողբաժնին, իսկ վերջինս շրջանի աշխատանքներն ամփոփելուց հետո ուղարկում է Հողժողկոմատ, հացահատիկային վարչության պայքարի խմբակին:

Շրջան՝ Լենինականի

գյուղ՝ Թափաղովակ

բրիգադ № 4 1-ին հետազոտության սկիզբը 1/III վերջը 5/VII
2-րդ և 25/IX 5/X

| Հետազոտված հեկտար ներով գրադից- րած | Վորից սուսլիկ- ներով գրադից- րած | Բների միջին խտությունը մեկ հեկտարի վրա |
|---|--|---|
| 150-իոնան | 50 | 54, վորից կենդանի 28 |
| 450-արոտավայր | 150 | 48, » » » 30 |
| 250-չիման | 200 | 29, » » » 18 |

ԿՈՂԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԲՐԻԳԱԴԻՒՄ

(ԱՍԱՏՐՅԱՆ)
(ՆԱԶԱՐՅԱՆ)



Պատ. խմբագիր՝ Ա. Աբրահամյան
Սահն. խմբ.՝ Լ. Բեկնալուսիյան
Տեխ. խմբագիր՝ Խ. Այվազյան
Սբագրիչ՝ Գար. Հակոբյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Վ. Ավագյան
Գլավվարի լիազոր № 1207
Հրատ. № 450, պատվեր № 625 տիրաժ 1500
Հանձնվել է արտադրության 1937 թ. հուլիս 23-ին
Ստորագրված ե առաջնային համար 1937 թ. ոգոստոսի 14
Գյուղհաստի տպարան, Ցեղան, Նալբանդյան № 11

ՀՀ Ազգային գրադարան



NL0288542

442 48 419.

442

17527



НКЗ Армянск. ССР
Зерновое управление
Полевые мыши, суслики,
и борьба с ними

Сельхозиздат, Ереван, 1937